ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

**«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ**

**"NATIONAL BUREAU OF EXPERTISES" SNPO**

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
24 Tsovakal Isakov Ave. 0004, Yerevan

Հեռ՝ (37410) 777710
Тел: (37410) 777710
Fax: (37410) 777704


№ 05/477

30 10 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՓԱԲ-ՇՀԱՊՁԲ-(11/16)-14/16»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Իսակովի 24, 1-ին մասնաշենք N 16 սենյակ հասցեով, Ա. Խաչատրյանին (հեռ. (010) 777710 (222)), մինչև 2014թ նոյեմբերի 11-ը, ժամը 11:00-ը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Իսակովի 24, 1-ին մասնաշենք N 16 սենյակ հասցեով, 2014թ. նոյեմբերի 11-ի, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերումը, որը կազմված է 7 չափաբաժնից: Ապրանքի գնման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցում):

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ Ե. ՁԱԴՈՅԱՆ